

աւատապետութիւններ եւ կը ստանային քաղաքական առանձնաշնորհներ: Հայկական դաւառներէն միայն Սասունը փոքր իշխանապետութիւն մ'ունէր, ու այդ վիճակով կը մնար, չնորհիւ այն բանին, որ այդ դաւառը կ'իյնար այն ութը դաւառներու մէջ, որոնք սուլթան Սէլիմի դաշնագրութեամբ կը թողուէին քիւրդ աւատապետութեան: Այնպէս որ Սասունը առանձին ֆէրման չունէր, եւ իր կարգին կապուած էր Հազոօի, Սղերդի եւ ձէզիրէի քրդական իշխանապետութեան:

Սուլթան Սէլիմէն յետոյ ալ դարեր շարունակ քիւրդերը կրցան պահպանել իրենց կէս անկախութիւնը: Թուրքերը եթէ փորձէին հէնց առաջին շրջանին հպատակեցնել քրդերը, ստիպուած պիտի ըլլային երկար ժամանակ պատերազմներ մղել անոնց դէմ: Նախամեծար համարեցին առնել զանոնք իրենց գերիշխանութեան տակ եւ օգտուիլ այն հանգամանքէն, որ քրդերը Սիւննի իսլամներ էին եւ կարելի էր զանոնք դործածել Պարսկաստանի դէմ որպէս Շիա աղանդին պատկանող պետութեան:

Բացի այս քաղաքական եւ կրօնական հաշիւներէն, Քիւրդիստանի աշխարհագրական դիրքն ալ մեծապէս կ'օգնէր աւատապետներու կէս անկախութեան: Քրդական մեծ ցեղեր տեղաւորուած էին՝ ձէզիրէ-Իրը-Օմարի, Հէքեարի, Սղերդի, Տիարբէքի, Բալուի, Գինջի, Ճապաղջուրի եւ Հազոօի (հարաւային Սասուն) շրջաններու մէջ: Այս դասաւորութեան բերումով անոնք չէին իյնար օսմանեան կայսրութեան բանակներու ոտքերուն տակ, երբ ան իր ուժերը կ'ուղղէր ռուսական կայսրութեան, Պարսկաստանի կամ Արաբիոյ դէմ: Միւս կողմէ՝ քրդական կէս անկախութիւնները չէին ներկայանար մէկ կեդրոնացած իշխանութեամբ, որով Թուրքիա ոչ միայն կրնար օգտուիլ անոնց պառակտումներէն, այլ կարող էր օգտուիլ զատ զատ անոնց ուժերէն՝ ընդդէմ Թուրքիոյ թշնամիներուն:

Տէրսիմը եւ Բայազիտը, որ կարեւոր շրջաններ էին, այլ դիրք ունէին: Տէրսիմը միշտ կռուի մէջ էր: Տէրսիմի եւ առհասարակ Ղըզըլբաշներու կռիւները քրդական անկախութեան մը ձգտումը չունէին: Անոնք թէ՛ ցեղով եւ թէ՛ կրօնական աղանդով քիչ նման էին

քիւրդերուն եւ խիստ կերպով կը տարբերուէին թուրքերէն: Անոնք կրօնական եւ ցեղային ատելութեամբ լեցուած էին թուրքերուն դէմ, որով աւելի շուտ եւ աւելի շատ ենթակայ եղան թրքական անողոք հարուածներուն: Այս իրողութիւնը կարելի է լուսաբանել, բացի կրօնական տարբերութենէ, երկու շօշափելի պատճառներով եւս: Նախ, Ղըզըլբաշները հոծ զանգուածներով կը գտնուէին Սեբաստիոյ եւ Խարբերդի նահանգներուն մէջ, ուր թրքական ազդարնակչութեան հետ անմիջական չիման մէջ էին, որպէս թշնամի տարր մը: Եւ երկրորդ՝ որ թրքական բանակները Կովկասի եւ Պարսկաստանի դէմ դործելու համար, իրենց անմիջական յենարան ունէին Սեբաստիա-Խարբերդ-Երզնկա-Երզրում-Կարս դիմը, ու բնական է, որ պիտի չհանդուրժէին ապստամբ այդ ուժերու գոյութիւնը: Տէրսիմը կը մնար միշտ նախանձախնդիր իր լեռնային անկախութեան, որ մինչեւ այսօր մասամբ կը շարունակուի, բայց ան իր սահմաններէն դուրս չեկաւ եւ ազգային բնոյթ չկրեց:

Բայազէտի իշխանապետութիւնը սկզբնական շրջանին կռուող տարրերով զօրաւոր չէր, տակաւին քրդական հոծ ազդարնակչութիւն մը տեղաւորուած էր այդ շրջաններու մէջ: Ու միւս կողմէ՝ հեռու ըլլալով քրդական կեդրոններէն, աւելի աջակից էր օսմանցիներուն իր գոյութեան զօրացման համար, քան ըմբոստ:

Ահա, այս պատճառներով երբ Կուրմանձ քիւրդերը (որոնք քրդական մեծամասնութիւնն էր կը կազմէին) համեմատաբար ազատ ու ինքնավար կեանք մ'ունէին, տակաւին 16-րդ եւ 17-րդ դարերուն Ղըզըլբաշներու բոլոր շարժումները արեան մէջ խեղդուեցան եւ վերջնականօրէն տկարացան: Կուրմանձները անոնց այդ շարժումներուն չօգնեցին եւ քրդական ընդհանուր իրաւունքները պաշտպանելու մը տաժումը չունեցան: 1800-ական թուականներուն միայն Տէրսիմի անառիկ շրջաններու մէջ անոնք իրենց գոյութիւնը պահպանեցին, կեդրոն ունենալով Խօզաթը, ուր Խօզաթի բէկերը ժառանգականօրէն իրարու կը յաջորդէին տեսակ մը թագաւորական կարգը պահպանելով, օրինակ, Հիւսէյն Ա., Հիւսէյն Բ. եւն.: